

ՄԱՍԻՍ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Մատուրանի խանութում

Օտարաբաղադրյալը դիմում են ուղղակի
Тифлисс. Редакция „Масис“

Խմբագրատանը բաց է առաւոտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ

ԲԱՆԱԳԱՅԻՆԻՒՆ

Թատրոնը ինչի համար է. — Ներքին տեսակետից, համակ Ալեքսանդրապոլից, համակ Բալթիկից, Ներքին լուրերից, Արտաքին տեսակետից, Ազգային, Բնագրի, Արտաքին, Լուրերի, — (Մշակի) հեռագիրներ, — Յայտարարութիւններ, — Տեղեկացոյց, — Բանասիրական, Հասարակական Բաժնորդի մասին:

ԹԱՏՐՈՆԸ ԻՆՁԻ ՀԱՄԱՐ Է

Թատրոնի հասարակութեան վրա ունեցած կրթողական նշանակութիւնը ոչ ոք չէ հերքում, բայց միայն դորա մէջ կարող է լինել մտքերի տարբերութիւնը, թէ ինչ չափով այդ հիմնարկութիւնը ազդում է կրթողական կերպով հասարակութեան այս կամ այն մասի, այս կամ այն դաստիարակի վրա, ինչ ուղղութեամբ է ներգործում նա հասարակութեան զանազան գործիչների վրա:

Մեկանգամ թատրոնը մեծ նշանակութիւն ունի հասարակութեան անդրադէտ մասի համար: Ստորվորի այն մասը որ ինքն կարող է գրել չէ գիտէ, նրա համար հարկաւոր է կենդանի լեզու, նրան հարկաւոր է բեմից սովորեցնել լսել մտքերը, որ նա ինքն իր ոյժերով չէ կարող ստանալ... Բայց եթէ ընդունենք որ թատրոնը պիտաւորապէս այսպիսի-

ԲԱՆԱԳԱՅԻՆԻՒՆ

ՀԱՅՈՑ ԱՌԱՎԸ ԲՈՒՅՈՐԻ ՄԱՍԻՆ *

Բոսֆորի նոյն իսկ մուտքում կանգնած է մի բարձր աշտարակ, Մովսէս կապուտ, ինչպէս յակիրթ փոքրահասակ աւելները փորձում են նրա ստորոտի վրա: Գազաթից այն անհարթ տանիքից՝ ձգվում է հրաշալի տեսարան դէպի հողի մի ամենագեղեցիկ անկիւնը: Մինչև այժմ պահպանված է մէկ աւանդութիւն այս աշտարակի ծագման մասին: Գիտ չառ և շատ տարիներ սորանից առաջ թագաւորում էր Բիւզանդիայում Մանուէլ Թագաւորը: Նա արդէն ծերացել էր երբ նրա վերջ, շատ երկար անուշական տաքիներից յետոյ, պարզեց նրան անդրանիկ գաւառի Մանուէլ Թագաւորը, որ արդէն կորցրել էր իր յոյսը— իրանից յետոյ ժառանգ թողնելու մասին: Մեծ արախտութեամբ լցվեց, Նա իսկոյն ուղարկեց պալատական աստղագետի ետեւից և ցանկանալով իմանալ իր աղջկայ բազմը, հրամայեց կազմել աղթարը (ГОРОСОНЕ): Աստղագետը կանգնեց թագաւորի հրամանը: Սա երկար ժամանակ ուսումնասիրելով աստղերի դրութիւնը, յայտնեց, «Աղջկանը» սպասում է օձի: Թագաւորը, կանչելով իր իշխանութեան տակ

սինների համար է, այն ժամանակ ինչէ՞ են գնում թատրոն ոչ թէ միայն զրոյէտ, բայց և զարգացած մարդիկ, ինչե մի հասարակութեան զարգացած մասի, ինտելեկտիկայի համար էլ թատրոնը ունի բարձր կրթողական նշանակութիւն:

Նոր պատճառով թատրոնը կարող է լինել երկու տեսակ ժողովրդական և հասարակութեան կրթված դասի համար թատրոն:

Նույնից անբաժան են երկու անհրաժեշտ պայմանները՝ ժողովրդական, ռամկական լեզու, որպէս միջոց միտքը հասկացնելու և բարոյական ու մտաւոր տարրական մտքերը ամփոփող բովանդակութիւն, որպէս հեշտ մատչելի և ժողովրդի համար կրթողական նիւթ:

Ներկորդի անհրաժեշտ պայմանն է գրական լեզուն և բարձր հասարակական ինդիւիդուալ ներկայացումն:

Մեր թատրոնական գրականութիւնը ներկայացնում է, շնորհով մեր գրեթէ միակ ազգային թատրոնական գրողի, Գ. Սունդուկեանցի, մի երևոյթ, որ երբէք չէ տեսնված ուրիշ ազգերի մտաւոր զարգացման պատմութեան մէջ: Սունդուկեանցի պիտ-

անները բովանդակում են իրանց մէջ հայոց հասարակութեան համար ընդհանուր մարդկային հասարակական ինդիւիդուալ ծումն, բայց նոյն պիտաները գրված են, իր տարածման համեմատ, սահմանափակ գաւառական, ռամկական բարբառով, թիֆլիսի բարբառով:

Նոր ճշմարիտ էլ հարկաւոր էր, որովհետեւ մեր թիֆլիսի հայոց հասարակութիւնը զարգացել է անբնական կերպով: Եւ այդ անբնական կերպով զարգացել են մեր բոլոր անդրկրկական հայ գաւառական հասարակութիւնները: Նրանցից իւրաքանչիւրը պահելով իր սեփական և միւսներից տարբեր գաւառական լեզուն, նախ քան տարածվել ամբողջ Մեղրկովկասում, ընդհանուր հայոց գրական լեզուն, սկսեց ընդունել ընդհանուր մարդկային քաղաքակրթութեան սկզբունքները, ենթարկվելով դրսի քաղաքակրթութեան ներգործութեանը:

Բայց արդեօք այժմ, երբ ամբողջ Մեղրկովկասի հայոց ազգաբնակչութեան մէջ տարածվել է ուսումնասիրանների և լրագրութեան միջոցով հայոց ընդհանուր գրականական լեզուն, ունեն արդեօք բազմութեան համար գաւառական

ինչ իր ճարտարապետներին կանգնեցնել մի բարձր, քաղաք աշտարակ-ամրոց Բոսֆորի մէջ իր պալատի հանդէպ: Աղջկը մկրտվեց ու անուանվեց Թէօֆորա-Աստուածատու: Երբ չինոթիւնը պատրաստվեց, այնտեղ տեղափոխեցին թագաժառանգուհուն բոլոր իր զայեակների և աղայիների հետ:

Ոչ մի մարդ չէր համարձակվում մերձենալ աշտարակին, բացի ցածում չըջապատի մօտ կանգնած պահապաններից, որոնց մահվան սպառնալիքով հրամայած էր, ոչ ոքի, ով որ չէ ստացել թագաւորից իրաւունք, չը թոյլ տալ մտնել այնտեղ:

Այնտեղ անցրեց Թէօֆորան մանկութեան երջանիկ օրերը: Նա արդէն 18-դ օրորդական ասկիայ տարում հաղուագիւտ գեղեցկութիւններից ամենագեղեցիկն էր, բայց զուշակութիւնը դեռ չէր կատարվել: Թագաւորը արդէն մոտեցում էր, թէ ինչպէս այն գեղահարա իրան համապատասխան մի փեսայ գտնի, նա յուսով էր որ ամուսնացնելով իր գտնեը՝ կազատէ զորանով այն մեծալ զուշակութիւնը:

Մի հրաշալի ամառային երեկոյ էր Բոսֆորի վրա լողում էին անհամար նաւերի և նաւակների բազմութիւն: Բայց նոցանից մէկը միւսներից որոշվում էր, և դրա վրա նստած էր մի երիտասարդ Ալեքսանդր: Գա հայոց իշխանի որդին էր, որի վայելքն և աւագակ զրաքիները թափվելով նրա երկրը՝ կողոպտել և սպանել էին ծնողներին: Ալեքսանդր ինքը հազիւ աղաւթվել էր: Նա

լեզուով գրած թատրոնական պիտանները նոյն նշանակութիւնը ինչպէս առաջ, — այդ մասին ուրիշ անգամ կը խօսենք:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷԿՍԱՆԴՐԱՎՈՂԻՑ

ապրիլի 18-ին

Ուղիղ 15 օրէ շարունակ ձիւն, կարկուտ ու սաստիկ անձրևներ են գալիս այստեղ, գրեթէ գիշեր ցերեկ: Տեղացի ինքնակները յիշում են միայն սրանից 15 տարի առաջ այս տեսակ անտանելի անձրևային եղանակ: Վասնորոյ այժմ այստեղի փողոցների ցեխը այն աստիճան է, որ արգելում է հասարակութեան փողոցների մի կողմից միւս կողմը հաղորդակցութիւն անել: Ամսոյս 14-ին երեկոյան, մի խեղճ զինուոր խեղդվում է եղել Ալեքսանդրեան փողոցում ցեխի մէջ ընկնելով, որ թէև ամբողջ մարմինը խրված է լինում ցեխի մէջ, բայց բարեբաղդաբար գլուխը շարժելու ժամանակ՝ տեսողները օգնում և ազատում են նրան:

Այստեղի հայ քահանաներից մին Մ... ինչպէս պատմում էր մէկը մի քանի անձանց ներկայութեամբ, տեղիս գերեզմանատնում կօճի (ճան կամ թուրքերէն այսպէս) խաղալով բաւական զուսմար է տարվում, որ ստիպված գրաւ է դնում նաև իրա շուրջառը և փխրելը:

Այստեղի հայ քահանաները, միայն սակա բացառութեամբ, ներքին բնաւորութեամբ կատարեալ անդարամներ են, իսկ արտաքին կերպարանքով ճիշդ կուսպաշտ ամենահին դարերի կեղծաւոր քրմապետների պատկեր են ներկայացնում: Առածը ասում է Աստուած սարը տեսնելով վրէն ձիւն է դնում, ուրեմն ինչ տեսակ քահանաներ, նոյն տեսակ և ժողովուրդ պէտք է սպասել: Եթէ որ սրանց նմանակները պէտք է լինեն հայ ժողովրդի բարոյական դաստիարակներ՝ ուրեմն վայ թեք ժողովուրդ... Առածը ասում է Աստուած ինձ տեսնի թեք տանի, բայց ես ասում եմ որ, թող Աստուած ինձ

եկաւ Բիւզանդիա և այստեղ ապրում էր իր հայրենիքից հեռու բերած փողոցով, բայց երբ փողոցը վերջացան, Ալեքսանդր ասկիպեցաւ մշակութիւն անել, նա դարձաւ ձկնորս: Ալեքսանդր ինքը բարձրահասակ, գեղեցիկ և վայելակալ էր: Նա միշտ հագնում էր նկարավայել հանդերձ բոսֆորեան ձկնորսների:

Այսօր, ինչպէս և միշտ այս ժամում, ծանր աշխատալի օրից յետոյ, իշխանազնը լողում էր գէպի իր աղքատիկ խրճիթը, Նրա ճանապարհը անցնում էր աշտարակի մօտով: Նա լսել էր, որ այնտեղ բնակվում է թագաւորի աղջիկը, լսել էր և նրա զարմանալի գեղեցկութեան, խելքի և բարութեան մասին: Հետաքրքրութիւնը տանջում էր նրան, մեծ անհամբերութեամբ ցանկանում էր տեսնել այդ հրաշալի գեղեցկուհուն: Ամեն ժամանակ, երբ անցնում էր այդ աշտարակի մօտով, Ալեքսանդր երկար միջոց և մեծ ուշադրութեամբ նայում էր վերև, բայց միշտ ի դուր, արքայազուստը չէր երևում:

Ալեքսանդր գցեց իր գեղեցկափայլ ամենամանր աստղաքերով վերը աչքերը դէպի պատշգամբը, որը բարձրանում էր ծովի երկնագոյն մակերևութից: Բանկարծ նա ուրախացած՝ հայ և յետոյ ինչպէս դիմելված՝ անզգայացաւ: Պատշգամբի վրա յենած սինապարդ վանդակների ռսկեայ շարերի վրա, ողջ կանաչով ու ծաղկներով պատած՝ կանգնած էր մի գեղեցիկ, բարձրահասակ, քնքշալ և գեղեցկակալ կին, կապուտ, փայլուն մեծ աչքերով, մազերը

Թէ՛հօղօրան, այստեղ... այստեղ — ապրօղօն
 իր աջ ձեռքը, ⁽¹⁾ զայնպէս յանգնէ թիկն
 Այն ժամանակ աղախիկները տեսան Վայկե-
 չաղեղ ծիւնախալ՝ ձեռքի վրա մի հաղիւ նշմա-
 րեկի կարմիր բլծ, որը հետզհետէ մեծանում էր.
 Զարհուրած՝ ամենքն էլ ճշացին, բոլորն էլ յետ-
 նախկին և տեսան յատուկի վրա պտուղներ
 մէջ մի, իրերբիկ ուն օձ, ⁽²⁾ մէկ մտաւ գլուխ
 «(՛)ձ», աղաղակեցին ամենքն էլ. նրանք մտա-

կան նաև տարբեր բաղադրումներ և 15 զրահաւոր մեծ նաւերից և 11 ոչ զրահաւոր նաւերից: Բացի Միջերկրականի այդ նաւատորմից, զա- նազան տեղեր զբաւած շատ շոգիւնաւոր կան զրահաւոր և ոչ զրահաւոր և շատեր էլ պատրաստուած են որ ուղարկեն Միջերկրա- կանի նաւատորմը զօրացնելու համար:

Լուր էր տարածված թէ անգլիական կա- ռավարութիւնը բանակցութիւններ է անում Շուէդիայի կառավարութեան հետ որ իրան թողարտէ նաւային մի կայարան հաստատել Բալտեան ծովում: Բայց Ստոկհոլմից պաշտո- նապէս հեռագրուած են թէ բոլորովին սուտ է այդ լուրը:

Համայնքների խորհրդարանում պ. Հիքս-Բիչ պաշտօնական հետեւալ տեղեկութիւնները հաղորդել է հարաւային Ամերիկայի ապստամբ- բութեան մասին: «Կապի և Տրանսվալի կառավարութիւնները աշխատում են բոլորու- վին նուաճել Կաֆրների, Ջուլուների և Տրանսվալի սահմաններում բնակվող այլ ցի- դերի ապստամբութիւնը: Պատերազմական բե- մից եկած լուրերը գոհացուցիչ են, թէպէտ երեւում է որ պատերազմական դժուարու- թիւնները այնչափ շուտ չեն վերջանայ որչափ կարելի էր յուսալ արանց քիչ ժամանակ առաջ: Հիւլիանների հետ սկսված բանակցու- թիւնները սահմանները որոշելու համար, մեզ բաւական հանգստացնում են այդ կող- մից և յուսով եմ որ այդ վեճը կը կարգա- դրվի դիւրութեամբ և մենք չենք ստիպվի նորից գործածել զէնքի զօրութիւնը: Բայց մեզ հայտնուած են մի նոր ապստամբութիւն տեղացի ազգերի, մի այլ նահանգում: Բոնթ- ները սկսել են շարժումներ անել: Կառավա- րութիւնը մտադիր է բաւական զօրք ու- զարկել այդ շարժումները զապելու համար:» Թագուհին այս իմաստով է պատասխանել լորդերի և համայնքների խորհրդարաններից ստացած ուղերձներին որոնք իրան տրվե- ցան պահեստի զօրքերին զէնքի հրաւիրվելուն նկատմամբ: «Աստա՜հ եմ միշտ որ դուք ինձ կօգնէք ամեն որոշումների մէջ որոնք կարող են հարկաւոր լինել իմ թագի պատիւը պահ- պանելու և տէրութեան շահերին ծառայե- լու համար:»

Եղիմուրդից գրում են որ Թոմաս Նիլսոնի անուանի մեծ տպարանը կրակ ընկել է և տպագրական մեքենաները և մամուլները որոնք շատ ընտիր տեսակից էին և բազմաթիւ գիր- քեր որոնք տպվում էին այն միջոցին, այր- վել և խանգարվել են: Տպարանում եղած վնասը 5 միլիոն ֆրանկի է հասնում որի

բերեցին աստղագետի գուշակութիւնը: Թագա- ւորի աղջիկը, երբ տեսաւ օձին նուազեց: Աղա- խիններից մէկը նրան անողնու դրեց, միւսները դուրս թռան պահպաններին յայտնելու:

«Շտապեցէք, շտապեցէք» գոռում էին նրանք. բմիշխներ բերէք, արքայադուստրը մեռնում է: Պահպանները լսելուն պէս, խիկոյն թռան նաւերը և գնացին դէպի պալատը: Ալեքսան- այս ժամանակ դեռ ներքեւում կանգած էր. նա բոլորը տեսնում էր: Ի վարմանը իր անհնազա- տութեամբ մօտեցաւ աշտարակին և հարցրեց պալատից թէ ինչ է պատահել: «Թագաւորի աղ- ջիկը մեռնում է», արագութեամբ պատասխա- լանեց վերջինս և առանց փակելու դռները վազեց դէպի վերեւ, Ալեքսան կանգնած էր ան- շարժ, ապշած: Նման, բայց ոչ երկար միջոց. նա նաւից դուրս եկաւ ափը. մտաւ դռնից, բարձ- րացաւ աստիճաններով: Նրան ոչ ոք չարգելեց, ոչ ոք չը կանգնեցրեց: Նա կանգնած էր զու- ների առաջ, նրա սիրտը սաստիկ խփում էր. նա բաց արեց դուռը և մտաւ թագաւորի աղջ- կայ սենեակը, երբ նայեց թղթերին, օձին և նուազած արքայադուստրը՝ իսկոյն հասկացաւ ա- մենը. Համոզված լինելով որ նա արդէն մեռնում է, Ալեքսան խոր հաւաքանքով մօտեցաւ նրան և իր շրթունքների մէջ սեղմեց նրա շուշանագեղ շրթունքները: Այս վերջ, տարփալի համբոյրը զարթեցրեց քնած կնիսական ուժերը: Ալեքսան անարտայայտելի հրճանքով նկատեց, ինչպէս մեղմ բարձրանում էր նրա քնքոյշ կուրծքը. մեղմ

երբորդ մօտը միայն ապահովութեան էր տըր- ված: 700 զործաւորներ որոնք աշխատում էին այդ տպարանում, անդործ թափառում են այժմ:

ՌԵՆԳԱՐԻԱ

Պէշադի ապրիլի 12-ին գրում են «Indé- pendance Belge» լրագրին: «Պ. Տիսայի խո- սած ճառի իմաստը արեւելեան քաղաքակա- նութեան վերաբերութեամբ այս է. Աւստրո- Ռուսարիան երբեք չէ կամենում փնտել արեւելեան քրիստոնէական շահերին և կոր- ծանել նրանց ապագան. նա ուզում է միայն իր սեփական շահերը համաձայնեցնել գոր- ծերի նոր դրութեան հետ: Մեր տէրութիւնը նոյնպէս չէ ուզում երկրորդական դեր ունե- նալ Արեւելքում, Ռուսաստանի հետեւողու- թեամբ. բայց յօժար է Ռուսաստանի հետ համաձայն գնալ երբ սա հրաժարվի ինքը միայնակ արեւելեան նահանգներ կազմելուց իր շահերի համեմատ:»

«Աւստրիայի կայսրը նոյն իմաստով մի նա- մակ է ուղարկել Ռուսաստանի կայսրին: Աւ- ստրիայի և Ռուսաստանի յարաբերութիւն- ների մէջ երեւցած նոր փոփոխութիւնը դէպի խաղաղութիւն՝ առաջ է գալիս աւելի այդ նամակից որ լաւ տպաւորութիւն է ունեցել Ալեքսանդր կայսրի խաղաղասէր ոգու վրա, քան թէ Բիսմարկի իշխանի միջնորդութիւնը: Այսուհետեւ աւստրո-ռուսական մի պատե- րազմի երկիւղը այնչափ չէ սպառնում որչափ առաջ. Ռուսարիայից ընդհանրապէս (եւ չեմ խօսում ընդհանրապէս կուսակցութեան մէջ ոգևորվելով յափշտակվածների համար) ցան- կանում են խաղաղութեան պահպանվելը: Պէշադի անկումից յետոյ մեծ փոփոխութիւն է եղած մաճառների վարմունքի մէջ և այդ փոփոխութիւնը զարմանալի չէ երեւայ նրան որ ծանօթ է այդ արեւելեան ժողովուրդի բնա-ւորութեան հետ: Ռուս-թիւրքաց պատերազ- մի ժամանակ մաճառները ոգևորված էին յօ- ղուտ Թիւրքիայի: Նրանք ասում էին որ եթէ Թիւրքիային աջողվի յաղթող մի մեծ տէրու- թիւն լինել Ռուսարիան իր ապահով դաշ- նակից կուներայ Թիւրքիային և նրա օգնու- թեամբ կարող է մի օր կատարելապէս ան- կախ թագաւորութիւն լինել: Շուտով իմացան թէ այդ յոյսի մէջ խաբված են և մի տեսակ վճատութիւն տիրեց մաճառների վրա: Նրանք զգում են այժմ որ միշտ կապված են Աւս- տրիայի հետ և իրանց ազգային կեանքը ապա- հովապէս զարգացնելու համար ուրիշ միջոց

հաւանց և երիտասարդը նկատեց թագաւորի աղջկայ գեղեցկափայլ խոր դարմացք արտայայ- տող իր վրա դցած հայեացքը: Նրա դէմքը լու- սաւորվեց ուրախութեամբ և հաղիւ լսելի ձայնով բացականչեց. «Կու իմ ցանկալի, այստեղ ես... ինձ հետ...» և նորիցալ եւմ քեզանից որ եկար, եւ քեղ տեսայ և այժմ կարող եմ հանգիստ մեռ- նել. համբուրի ինձ, իմ կեանքը, մի օրպէ քո կուրծքիդ մօտ՝ արժէ ամբողջ կեանքիս:»

Ալեքսան համբուրեց նորից նրա մարմարեայ նուրը շրթունքը և ասաց. — «Կու չես մեռնի, իմ սիրելիս, դու կայսրես, եւ քեղ կը փրկեմ:» — Նա բռնեց նրա խայթված ձեռքը և մօտեցրեց իր շրթունքներին:

— «Ինչ ես անում, հարցրեց օրիորդը: — Գանկանում եմ քեղ փրկել, պատասխանեց իշխանագինը:

Թագաւորի աղջիկը հասկանալով նրա դիտա-ւորութիւնը՝ յետ քաշեց ձեռքը: «Չէ, չէ, կան- չեց նա, ինձ համար այլ եւ չը կայ բաղաւա- րութիւն» եթէ քո կեանքով պէտք է քնեմ իմ կեանքը:»

Բայց երիտասարդը պինդ բռնեց ձեռքը և սեղմելով խայթված իր շրթունքների մէջ՝ սկսեց այնպիսի ախորժակով և եռանդով ծծել թունա-ւոր հիւթը, որ կարծես թէ նեկտար էր այն: Այս միջոցում մտաւ սենեակը թագաւորը շրջապա- տված իր պալատական բմիշխներով և մեծ բազ- մութեամբ, Նա զարմացաւ և յետոյ սաստիկ բարկացաւ երբ տեսաւ երիտասարդին իր աղջ-

չը կայ, բայց միայն պահպանել երկուու- թեան (dualisme) դրութիւնը, շարունա- կելով այժմ աւստրո-ռուսական միապե- տութիւնը: Բայց յայտնի է որ երկուութեան դրութիւնը իր զօրաւոր հակառակորդներն ունի զինուորական բարձր դասակարգի մէջ Վիեննայի արքունիքում: Այդ զինուորական մասը որ մինչև անգամ խաղաղութեան ժա- մանակ պահանջում է Բոսնիան և Հերցեգո- վինան միացնել Աւստրո-Ռուսարիայի հետ, ի հարկէ իր ցանկութիւնները աւելի ընդարձակ կերպով կը կատարէ երբ պատերազմ լինի և յաղթութիւններ անէ Աւստրիան: Այն ժա- մանակ թիւրքո-սլաւոնական շատ նահանգներ կը միանան Աւստրիայի հետ, բայց այդ նա- հանգները Ռուսարիայի հետ միանալուց յե- տոյ անհնար կը լինի երկուութեան գրու- թիւնը պահպանել: Կոմս Անդրաշին շատ չէ ցանկանում այդ նահանգների միացնել Աւս- տրո-Ռուսարիայի հետ, բայց զինուորական խմբի ցանկութիւնների առաջ կը ստիպվի խոնարհել: Այս է Ռուսարիայում հասարա- կական կարծիքի իսկական դրութիւնը որ յայտնի չէ օտարներին որովհետեւ նրանք դատողութիւններ են անում Պէշադի լրագրի- ների և պարլամենտի ընդդիմադիր կուսակ- ցութեան արած յայտարարութիւնների հա- մեմատ:»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Times» լրագրին Սան-Ստեֆանոյց հեռա- գրում են ապրիլի 30-ից հետեւեալը. «Կենդան Տօտլէքէնը զօրքի գլխաւոր հրամանատարու- թիւնը ընդունելով, զինուորական պատմութեան նոր չըջան է սկսվում: Տօտլէքէնի նշանակելը այստեղի զօրքի վրա այն տպաւորութիւն է զործել, որ նա հաւատացած է որ պատերազմը կը շարունակվի: Իրան, գեներալի կարծիքն էլ ինչպէս ինձ պատմեցին այն է որ պատերազմը անփախչելի է, և սրա կարծիքը նրա շտաբի գլ- խաւորն էլ բաժանում է: Ձիւտուրները սկսում են աւելի խօսել պատերազմի վրա: Բանը նրա- նումն է, որ զինուորները դադարած են ձախճ- ներում մնալով, որ վերս է առաջացնում, և շա- տերն ասում են, որ պատերազմը ներկայ անու- թիւ դրութիւնից և անդրադարձութիւնից աւելի լաւ է: Զօրքի արտաքին տեսքը բաւականացուցիչ է: Բոլորը նոր մունդիրներ ունենին և զինուորները աւելի լաւ և մաքուր էին հագնված:»

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

10-նոյն, 1/13 մայիսի: «Times» լրագրին հեռագրում են, որ գեներալ Տօտլէքէնը ըս-

կայ ունեւանում: Բմիշխը, զինելով արքայադու- տեր ձեռքը, յայտնեց, որ նա փրկված է երե- տասարդ ձկնորսի հանցքած օգնութեամբ: Թա- գաւորը մոռանալով իր բարկութիւնը, խորը խղճահարկած հարցրեց, «ե՛ղ ես դու, երիտա- սարդ:»

— Ինձ անուանում են Ալեքս, ես հայոց իշ- խանի որդին եմ: և յետոյ պատմեց իր բոլոր պատմութիւնը: Երբ վերջացրեց, թագաւորն ա- ասաց:

«Կու փրկեցի իմ աղջկանս, և ես դրա հա- մար յափտեան շնորհակալ կը լինեմ, ասա, ինչ ես ցանկանում, տալիս եմ քեղ թագաւորական խօսք որ կը կատարեմ բոլոր քո ցանկացածը:»

— Ո՛վ թագաւոր, թոյլ տուր ինձ քաղել մի համբոյր, մի վերջին համբոյր քո գեղեցիկ աղջ- կանից: չէ որ ես պէտք է մեռնեմ թոյնից, որից փրկեցի նրան:

Այն ժամանակ Թէօֆորան սկսեց լալ աւ բա- ցականչել. «Յի չեմ կամենում ապրել առանց քեզ. իմ կեանքը առանց քեզ չունի ինձ համար արժէք:»

Երիտասարդը ընկաւ ծնկները վրա իր սի- րունու առաջ: Աղախինները ուզում էին արգե- լել, բայց թագաւորը գլխաշարժված՝ ասաց. «Մի արգելէք դրան, սա մեռնողի վերջին պարգեն է, եւ չեմ կարող խել նրանից:»

Ալեքսան թագաւորի և ողջ պալատականների ներկայութեամբ վերմօրէն գրկեց իր Թէօֆորա- յին և պինդ համբուրեց նրան: Բմիշխը, որ դեռ

պառնաց գրաւել Կ. Պօլսը, եթէ Շուսա, Վարնա և Բաթում ամրոցները անյապաղ չեն յանձնի ռուսներին: Սան-Փաշան տեղե- կայեց միմիայն խորհուրդին, որ թիւր- քաց զօրքերը չեն կարող ընդդիմանալ մայ- րաքաղաքի գրաւելուն: Տօտլէքէնի վճռական պահանջի պատճառով Բ. Գուռը վճռեց ան- յայաղ մաքրել յիշեալ ամրոցները Տօտլէ- քէնը յետ կը քաշվի դէպի Ալբանիապոլ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2-ին մայիսի: Պետական բանկի 50% տոմսը առաջին շրջանի արժէ 97 ռ. 25 Կ., երկրորդ 95 ռ., երրորդ 95 ռ., չորրորդ 95 ռ., ներքին 50% առաջին փոխա- ռութեան տոմսը արժէ 228 ռ. 50 Կ., երկրորդ 224 ռ. 25 Կ., արեւելեան 94 1/8 ռ., ոսկի 8 ռ. 45 Կ.: Բօրայի տրամադրութիւնը թոյլ է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 մայիսի: Պետական բան- կի 50% տոմսը առաջին շրջանի արժէ 97 ռ. 12 Կ., երկրորդ 95 ռ. 12 Կ., երրորդ 95 ռ., ներքին 50% առաջին փոխառութեան տոմսը արժէ 227 ռ. 75 Կ., երկրորդ 223 ռ., արեւելեան 94 ռ. 35 Կ., ոսկին 8 ռ. 60 Կ.: Ռուսաց 1 ռ. Լօնդոնի վրա արժէ 23 պենս, ռուսաց 100 ռ. Գերմանիայի վրա արժէ 195 մարկ., Փարիզի վրա 239 ֆրանկ 50 սանտիմ: Տրա- մադրութիւնը թոյլ է:

10-նոյն 2/14 մայիսի: Անգլիայի էական հակառակութիւնը Սան-Ստեֆանոյի դաշ- նագրի դէմ նրա մէջն է կայանում որ այդ դաշնագրով Ռուսաստանը ստանում է ան- պայման գերագոյնութիւն Թիւրքիայում: Նոր Բօլզարիա կապ ունենալով ռուսաց զօրու- թեան հետ Սահայում, կը դարձնէ Թիւրքիա- յին աւատական պետութիւն: Այդ բանին է հակառակում Անգլիան: Առանց զեղումների Անգլիան իրան բաւականացած չէ համարում Բօլզարիան, ինչպէս նա նախագծված է Սան- Ստեֆանոյի դաշնագրի մէջ, պէտք չէ շատ փոք- րացրած լինի: Գուցէ այդ զեղումն չէ պա- հանջի Հայաստանի նոր սահմանների փոփո- լանքը:

Կ. ՊՈԼՍ, 2/14 մայիսի: Թիւրքաց զօր- քերից բերբերը մաքրելու և միաժամանակ ռուսների Սան-Ստեֆանոյից հեռանալու մա- սին բանակցութիւնները չաջողվեցան, որով- հետեւ Տօտլէքէնի կազմած պլանը յետ քաշ- վելու մասին հաճութիւն չէ ստացել Ս. Պե- տերբուրգում: Լօրանով-Բօստովիկի հասաւ Կ. Պօլս:

Բռնած էր Ալեքսի ձեռքը յուսահատված կեր- պով ազդակեց:

— Թագաւոր, սխալվում ես, և դուք ամենքը էլ սխալվում էք. երիտասարդը չի մեռնի, թոյ- նը միայն պատճառում է մահ, եթէ նա վերքի միջով է թափանցում արեան մէջ:

Թագաւորը զարմացած և շլիթված կանգնած էր խոր լուսութեան մէջ: Նա յուսով էր տալ իր աղջկան մի աւելի նշանաւոր անձի և ոչ թէ արտաքուստ իշխանին: Բայց սիրահարները ամ- բողջ արքունեաց ներկայութեամբ, հնազանդե- լով թագաւորի արքունական խօսքին, միմեանց համբուրեցին և նա էլ չը կարողացաւ փոխել գործը: Երիտասարդ ձկնորս—իշխանը, ծուկ չըքելով դրա առաջ ասաց:

— Թագաւոր, ես սիրում եմ աղջկանդ իմ կեանքիցս աւելի:

Թէօֆորան էլ նոյնպէս հառաչելով ընկաւ հօր ոտքերը: Մահուէլ թագաւորի դէմքի վրա փայ- լեց մարդասէր ժպիտ:

«Նա քոն է, Ալեքս» ասաց թագաւորը, դու նրան փրկեցիր մահից և թող նրա կեանքը պատկանի քեզ:

Սիրողները զմայլված և հիացած՝ ընկան մի- մեանց գրկի: Իսկ թագաւորը ցածր ձայնով ար- տասանեց:

«Գուշակութիւնը կատարվեց, օձը սպանւում էր աղջկանը. բայց տուեց նրան երջանիկ ամու- սին:»

(C. II. BՅԳ.)

